ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն դասվար

Թեմա Շերտավոր ուսուցման գործընթացի առանձնահատկությունները

Կատարող Վարձելյան Նաիրա Մանուկի
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար Մ.Գ.Դ., պրոֆեսոր Ջ. Գյուլամիրյան
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն----------3

2. Ուսուցման շերտավորման առանձնահատկությունները մայրենիի պարապմունքներին ----------4

3. Շերտավորված աշխատանքներ կազմելու մեթոդիկան--------5

4. Շերտավորման հիմնական ձևերի բնութագիրը----------5

5. Շերտավորված առաջադրանքների տեսակները----------6

6. Անհատական աշխատանք օժտված երեխաների հետ, աշխատանքի ձևերն ու մեթոդները----------7

7.Եզրակացություն----------17

8.Գրականության ցանկ----------19

# Ներածություն

Ուսուցման շերտավորում. ուսումնական գործընթացի կազմակերպում աշակերտների որոշակի խմբին հատուկ առանձնահատկությունների հաշվառումով:

Շերտավորված ուսուցումը անհատականացման պայման և միջոց է:Ուսուցման շերտավորման նպատակներն են.

- **Ուսուցողական նպատակ:** Շերտավորման միջոցով կատարելագործել գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, նպաստել ուսումնական ծրագրերի պահանջների իրականացմանը:
- **Զարգացնող նպատակ:**Ձևավորել և զարգացնել տրամաբանական և ստեղծագործական մտածողությունը՝ հենվելով զարգացման մերձակա գոտուն:
- **Դաստիարակչական նպատակ:** Անհատականության ձևավորում:

Որպես կանոն՝ դասի ժամանակ ուսուցչի ընտրած աշխատանքի միջին տեմպը թվում է նորմալ որոշ աշակերտների համար, մյուսների համար այն բավական արագ է, իսկ մեկ այլ խմբի համար ՝ավելորդ ձգձգված: Միևնույն ուսումնական խնդիրը երեխաների մի մասի համար կարող է բարդ լինել, իսկ մյուսների համար՝ դյուրին հարց: Այլ խոսքով ուսումնական նյութի յուրացման հաջողությունը պայմանավորված է ոչ միայն ուսուցչի գործունեությամբ այլ աշակերտների կարողություններով և ճանաչողական հնարավորություններով, որոնք պայմանավորված են մի շարք գործոններով, այդ թվում նաև՝ ընկալման հիշողության մտածական գործունեության, ֆիզիկական զարգացման առանձնահատկություններով: Այստեղից երևում է, որ յուրաքանչյուր ուսուցչի առջև դրվում է շատ կարևոր խնդիր՝ նման հակասությունների բացասական հետևանքների չեզոքացում և դրականի զորացում, այսինքն ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց առկայության դեպքում հնարավոր կլինի օգտագործել յուրաքանչյուր երեխայի փաստացի և պոտենցիալ հնարավորությունները ուսուցման դաս-դասարանային պայմաններում:Աշխատանքի ամենաանհրաժեշտ պայմանը յուրաքանչյուր աշակերտի զարգացման մեկնարկային մակարդակի օբյեկտիվ բացահայտումն է:

**|Շերտավոր ուսուցումը նպատակ չէ, այլ ուսուցման գործընթացում յուրաքանչյուր երեխայի անհատականության ձևավորման և զարգացման միջոց է:**

## Ուսուցման շերտավորման առանձնահատկությունները մայրենիի պարապմունքներին

Մայրենիի դասերին շերտավորված մոտեցում կարելի է իրականացնել դասի տարբեր փուլերում տարբերակված առաջադրանքների ներմուծմամբ:

Տարրական դասարաններում <<Մայրենիի>> դասընթացում շերտավորված ուսուցման արդյունավետ իրականացման հիմնական պայմանները հետևյալն են.

1.շերտավորված ուսուցման ժամանակ սովորողներին ներկայացվող պահանջները չպետք է նվազեցնել: Առաջադրանքները պետք է կազմվեն այնպես, որ նույնիսկ ամենաթույլ աշակերտներն էլ համապատասխանեն ծրագրին, իսկ առավել պատրաստված սովորողները խորացնեն իրենց գիտելիքները:

2. շերտավորված ուսուցման կազմակերպման պարտադիր պայման է ուսուցիչների գիտելիքների առկայությունը սովորողների ուսումնառության մակարդակի և ճանաչողական կարողությունների զարգացման, նրանց անհատական առանձնահատկությունների վերաբերյալ:

3. շերտավորված ուսուցման արդյունավետությունը կախված է սովորողների գործունեության ուսուցման կազմակերպման խմբային, ֆրոնտալ և անհատական ձևերի նպատակահարմար համապատասխանեցումից:

4.Մայրենիի դասերին շերտավորված ուսուցման իրականացման պայմաններն են. դիդակտիկ նյութերի բավարար պաշար , պարբերաբար ստուգում և աշակերտների աշխատանքի գնահատում, ճանաչողական գործունեության հնարների ուսուցում:

Կարևոր է նաև գիտելիքների շերտավորված ստուգման խնդրիը: Գնահատման հարցում պարտադիր տարր է վերլուծությունը: Այդ աշխատանքը ենթադրում է հայտորոշիչ ստուգումներ, որի արդյունքում ուսուցիչը հնարավորություն է ստանում նյութեր հավաքելու և ամբողջական պատկերացում կազմելու ամբողջ դասարանի, առանձին խմբերի և յուրաքանչյուր աշակերտի ուսումնառության մակարդակի մասին: Յուրաքանչյուր աշակերտի անհատական ձեռքբերումների հաշվառումը և հետագա աշխատանքների ծրագրավորումը հնարավորություն է տալիս հետագա ուսուցման պլանավորման համար:

Դասի բոլոր փուլերում, որտեղ կիրառվում է աշակերտների շերտավորված աշխատանք, պետք է արդիականացնեն հետևյալ խնդրիները.

1.Ներդասարանական շերտավորման միջոցով կատարելագործել աշակերտների գիտելիքները, կարողությունները և հմտությունները, նպաստել ծրագրային պահանջների իրականացմանը,

2.Զարգացնել տրամաբանական մտածողությունը, ստեղծագործականությունը:

3.Ձևավորել ուսումնաճանաչողական դրդապատճառներ:

4.Պայմաններ ստեղծել յուրաքանչյուր երեխայի առանձնահատուկ կարողությունների և հմտությունների զարգացման համար:

## Շերտավորված աշխատանքներ կազմելու մեթոդիկան

Տարբեր աշակերտների գիտելիքների յուրացման մակարդակը միօրինակ չէ:

1.Վերարտադրողական մակարդակ. Կարողանալ վերարտադրել հասկացությունների, կանոնների հատկանիշները, գործողությունների հայտնի եղանակներով վերարտադրությունը հնարավորություն է տալիս լուծել խնդրիը՝ տրված օրինակով:

2. Կառուցողական մակարդակ. Առաջադրանքների կատարման յուրացված քայլաշարը թույլ է տալիս օգտագործել նախկինում ստացած գիտելիքները փոփոխված իրավիճակներում, որը նպաստում է կապեր հաստատել հասկացությունների միջև, թեև առայժմ թույլ չի տալիս կատարել խոր ընդհանրացումներ կամ գիտելիքը կիրառել նոր իրավիճակներում:

3.Ստեղծագործական մակարդակ.Ամուր յուրացված հիմնական դրույթները թույլ են տալիս ապահովել գիտելիքների ընդհանրացումներ կատարելու բարձր մակարդակ, միջառարկայական կապեր ստեղծել, ինչն իր հերթին նպաստում է ստացած գիտելիքները ստեղծագործաբար կիրառել նոր իրավիճակներում:

Յուրացման այս մակարդակներն էլ ընկած են բազմամակարդակ առաջադրանքներ կազմելու մեթոդիկայի հիմքում:

## Շերտավորման հիմնական ձևերի բնութագիրը

1.Շերտավորված ուսուցում՝ հաշվի առնելով անձի հոգեբանական առանձնահատկությունները: Դրանք սովորողների այնպիսի ճանաչողական գործընթացների հաշվառումն է, ինչպիսիք են մտածողությունը, հիշողությունը, ուշադրությունը:

2.Շերտավորում՝ ըստ ուսումնառության մակարդակի:Այն ենթադրում է այնպիսի առաջադրանքներ, որոնք վերացնում են գիտելիքների յուրացումն արգելակող բացթողումները:

3. Շերտավորում՝ ըստ հատուկ առանձնահատկությունների՝ գեղարվեստական երաժշտական, հաղորդակցական:

4. Շերտավորում՝ ըստ ճանաչողական առանձնահատկությունների: Առանձնացվում է ընդհանուր կարողությունների/ ակադեմիական/ ցանկացած ճանաչողական գործունեության նկատմամբ և հատուկ կարողություններ/ օրինակ մաթեմատիկայի ուսուցման նկատմամբ/:

5. Շերտավորում՝ ըստ սովորողների հետաքրքրությունների և հակումների:

**Ներդասարանական շերտավորման կազմակերպումը ներառում է մի քանի փուլեր**

**1.** Չափանիշների սահմանում, որի միջոցով առանձնացվում է սովորողների խմբերը տարբերակված աշխատանքի համար

**2.** Մշակված չափանիշներով հայտորոշման անցկացում

**3.** Խմբերի բաժանում՝ ըստ հայտորոշման արդյունքների

**4.** Շերտավորման միջոցների ընտրություն, տարբեր խմբերում ներգրավված սովորողների համար տարամակարդակ առաջադրանքների ընտրություն

**5.** Դասի տարբեր փուլերում տարբերակված մոտեցման իրականացում

**6.** Սովորողների աշխատանքի արդյունքների ստուգում, որի համաձայն հնարավոր է խմբերի և տարբերակված բնույթի փոփոխություն

## Շերտավորված առաջադրանքների տեսակները.

1.Նախապատրաստական առաջադրանքներ ըստ բարդության մակարդակի.

- հեշտացված
- միջին դժվարության
- դժվար

2.Ամբողջ դասարանի համար ընդհանուր առաջադրանք՝ բարդացվող լրացուցիչ առաջադրանքների համակարգով:

3. Անհատական շերտավոր առաջադրանքներ:

4.Խմբային տարբերակված առաջադրանքներ՝ հաշվի առնելով խմբերի պատրաստվածության մակարդակը;

5.Նույնարժեք տարբերակված առաջադրանքներ՝ յուրաքանչյուր տարբերակում ներառելով բարդացող լրացուցիչ առաջադրանքներ:

6.Վարժություններ՝ նշելով նվազագույն և առավելագույն քանակի առաջադրանքները պարտադիր կատարման համար:

7.Անհատական- խմբային առաջադրանքներ, որոնք տրվում են քարտերի միջոցով:

8.Շերտավորված առաջադրանքներ տարբեր աստիճանի օգնությամբ:

Շերտավոր ուսուցումն իրականացվում է տարբեր ձևերով: Հաճախ ուսումնառության ցածր մակարդակ ունեցող սովորողներին տրվում է վերարտադրողական բնույթի առաջադրանքներ, իսկ ուսումնառության միջին և բարձր մակարդակ ունեցող սովորողներին՝ ստեղծագործական բնույթի առաջադրանքներ: Կարելի է ստեղծագործական բնույթի առաջադրանքներ առաջադրել նաև բոլոր սովորողներին:Բայց այդ դեպքում ուսումնառության ցածր մակարդակ ունեցող սովորողներին տրվում են առաջադրանքներ՝ ստեղծագործական տարրերով, որի կատարման ընթացքում գիտելիքները պետք է կիրառեն նոր, անծանոթ իրավիճակում:

Օրինակ, ամենացածր մակարդակում առաջադրվում է ընթերցել դասանյութը, վերարտադրել և առանձնացնել հիմնական մտքերը, իսկ միջին մակարդակում՝ ընթերցել դասանյութը, կազմել պլան և հարցեր տվյալ դասանյութի շուրջ, իսկ

առավել բարդ մակարդակում՝ ընթերցել դասանյութը, կազմել սեղմագիրը և գրել տպավորությունը դասանյութի վերաբերյալ:

## Անհատական աշխատանք օժտված երեխաների հետ, աշխատանքի ձևերն ու մեթոդները

Սովորաբար օժտված երեխաների թվին են դասում նրանց, ովքեր խելացի, կողմնորոշվող ու տրամաբանող են: ՈՒստի պատահական չէ, որ երեխաների օժտվածության ուսումնասիրությունները, որոնք թերևս սկսվել են 20-րդ դարի առաջին տասնամյակից, շեշտը դրել են հենց մտավոր ունակությունների և դրանց առանձնահատկությունների բնութագրման վրա: Այդ ժամանակների ուսումնասիրությունները հիմնականում ուղղված էին օժտվածության վրա ազդող գործոնների (սոցիալական, ազգային, դաս տիարակչական և այլն) ուսումնասիրմանը: Հավասարապես մանկավարժական միջամտության և նպատակաուղղված գործունեության կարիք են զգում ինչպես չառաջադիմող աշակերտները, այնպես էլ արտակարգ ընդունակություններով երեխաները. օժտված երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացի ճիշտ կազմակերպումը ժամանակի պահանջներից է, քանի որ քաղաքակիրթ միտքը ուղղորդում են հենց տաղանդավոր մարդիկ, և անթույլատրելի է ցանկացած անփութություն մտավոր ռեսուրսների նկատմամբ:

Բացառիկ ընդունակություններով օժտված երեխաների հետագա զարգացման համար բավարար նախապայմաններ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է՝

- ընտրել այնպիսի մեթոդներ և ուսման ձևեր, որոնք կնպաստեն երեխայի՝ համադրելու, համեմատելու, վերլուծելու, դասակարգելու և եզրակացնելու ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը,
- հնարավորինս քիչ ժամանակ տրամադրել տեղեկատվությանը և, ընդհակառակը, ժամանակի մեծ մասն ուղղել քննարկումներին՝ օգտագործելով «բաց հարցեր, որոնք չեն ենթադրում «այո կամ «ոչ պատասխաններ,
- ցուցաբերել հարգանք երեխայի անհատական հնարավորությունների և հետաքրքրությունների նկատմամբ,

ընտրել ուսուցման այնպիսի ձևեր և մեթոդներ, որոնք կպարունակեն առանձնահատուկ տարրեր: Օրինակ՝ կարելի է կիրառել «մտագրոհ, դերային վարժություններ, խմբային աշխատանքներ, ստեղծագործական հանձնարարություններ,

միասնական ուսուցմամբ նպաստել հասարակության մեջ երեխաների հետագա սոցիալական հարմարվողականությանը:

Օժտված երեխաների հետ աշխատանքը հատուկ մոտեցում և մանկավարժի հատուկ որակավորում է պահանջում: Այդպիսի երեխաների հետ աշխատել սովորել կարելի է, եթե որպես կարևոր խնդիր լրջորեն ընդունվի մանկավարժական գործունեության այս կերպը՝ երեխայի ունեցած ընդունակությունները պահպանել, աջակցել ու զարգացնել և դրա հետ նրա անձնավորության այլ կողմերի, օրինակ՝ հուզական ոլորտի զարգացմանը չվնասել:

Իմիջայլոց խնդիրը կիսով չափ լուծվում է, եթե ուսուցիչը կարողացել է տեսնել երեխայի շնորհքը, այսինքն՝ հասկացել և ըստ արժանվույն գնահատել է նրա առանձնահատկությունները:

Հանճարեղ մարդկանց կենսագրությունը ուսումնասիրելով՝ շատ հեշտ կարելի է համոզվել: Որպես կանոն՝ յուրաքանչյուրի կյանքում եղել է ինչ-որ մեկը, որը տեսել է ապագա հանճարի երևելի ընդունակությունները և հավատացել է:

Տաղանդը միայն ազատության մեջ է ծաղկում:

Իսկ ինչպե՞ս պայմաններ ստեղծենք ընդունակության զարգացման, օժտված երեխայի՝ կայացած ստեղծական ճակատագրով մարդ «դառնալու» համար: Ոչինչ այնպես չի սպանում ընդունակությունը, ինչպես ստանդարտ, անկյանք, միջինացված մոտեցումը, անպտուղ առաջադրանքները, անվերջ ընդհանուր աշխատանքը: Օժտվածությունը նեղ, խստորեն սահմանված շրջանակներում չի զարգանում: Որպեսզի ընդունակությունները զարգանան պետք է մշտապես մարզել, անհատական աճի համար տարածություն է անհրաժեշտ: Երեխան պետք է սովորի դժվարություններ հաղթահարել, խիզախել, նպատակին հասնելու համար համառություն ցուցաբերել, պատասխանատվություն կրել: Այս կարևոր անձնային որակների զարգացմանը նպաստում է մշտապես խնդրահարույց իրավիճակների հաղթահարումը հայտնաբերման և ստեղծագործելու ուրախություն զգալու

հնարավորության հետ: Շատ արդյունավետ է, օրինակ, աշխատանքը փոփոխվող կազմով փոքր խմբերում, որտեղ երեխան զրուցընկեր, ընդդիմախոս, նման հետաքրքրություններով ընկեր է գտնում, սովորում է իր ինքնատիպ գաղափարները մատչելի արտահայտել և դրանք ընկերների կարծիքի հետ համադրել:

Ի վերջո, խմբային աշխատանքն ուսուցչին ավելի շատ հնարավորություն է տալիս տարբեր բարդության առաջադրանքներ կիրառելու: Հասկանալի է, որ դա դասին պատրաստվելու ավելի շատ ժամանակի ծախս է պահանջում: Այդ ծախսերն անխուսափելի են օժտված երեխաների հետ լրջորեն աշխատելու պատրաստ ուսուցչի համար: Չէ՞ որ զարգացման համար այդպիսի երեխաներին անհրաժեշտ է որակապես այլ մակարդակի ուսումնական նյութեր ուսումնասիրել:

Օժտված երեխաները հարցերի պատասխանները ինքնուրույն փնտրելու կարիք ունեն, որի արդյունքում նրանք բացահայտում են ոչ ակնհայտ կապերը և գտնում են ինքնատիպ լուծումներ:

Հաճախ դպրոցական կյանքում օժտված երեխաներին ուղեկցում են փոխհարաբերությունների դժվարությունները: Շատ բան կախված է նրանից, թե ուսուցիչները ինչպես կվերաբերվեն բոլոր մյուսներից շատ հստակ առանձնացվող երեխային: Լավ ուսուցիչն ընդունակ աշակերտին ոչ միայն լրացուցիչ աշխատանքի աղբյուր, այլ նաև սեփական զարգացման հնարավորություն է համարում:

Ընդ որում առաջադրանքները պետք է ապահովվեն զարգացումը ոչ միայն այն ուղղությամբ, որը երեխային հատկապես հաջողվում է: Օժտված երեխաների ամենամեծ խնդիրներից մեկն այն է, որ նրանց ունակությունները սկսում են շահագործել՝ հանուն օլիմպիադաներում և մրցումներում հաղթանակի խրախուսելով միակողմանի զբաղմունքն ու վարժանքը: Իսկ թույլ կողմերը այդպես էլ կարող են առանց որևէ ուշադրության և զարգացման մնալ: Օրինակ՝ կարող է կաղել բնական կամ ճշգրիտ գիտությունների ոլորտում օժտված երեխաների լեզվական արտահայտչամիջոցների զարգացումը, որն ուղղակի չի հասցնում նրանց մտավոր բուռն աճի հետևից: Այդ դեպքում ևս շատ օգտակար են խմբային քննարկումները, որոնց ժամանակ երեխայի մեջ շահագրգռություն է առաջանում իր մտքերն արտահայտելու այնպես, որ իրեն հասկանան: Եվ ուսուցիչը համբերատարություն պետք է դրսևորի, օգնի նրան ձևակերպելու մտքերը, և ոչ թե ընդհատի սովորական

«Նստիր, մտածիր» արտահայտությամբ: Եթե օժտված երեխան դժվարությամբ է արտահայտում մտքերը, կարելի է խմբի բոլոր անդամներին առաջարկել նախ գրի առնել առաջացած գաղափարները: Դա ավելի շատ ժամանակ և ձևակերպման վրա կենտրոնանալու հնարավորություն կտա:

Օժտված երեխային սպառնացող մեկ այլ վտանգ է անհատական զարգացման խեղաթյուրումը: Բոլորին հայտնի են դեպքեր, երբ ամբողջ ընտանիքը համառորեն և հափշտակությամբ փառաբանում է երեխայի տաղանդը, նրան երես տալիս ու փափկակեցության սովորեցնում:

Գործնականում ծնված օրվանից իր մասին լսելով հիացմունքի այդ չափազանցված խոսքերը՝ երեխան սկսում է իր նկատմամբ բացառիկ վերաբերմունք ակնկալել և իրեն շրջապատողների հետ համապատասխան ձևով վարվել: Դա ամեն դեպքում երեխայի համար կարող է հիվանդագին հետևանքներ ունենալ: Եվ հատկապես, եթե զարգացման մեջ առաջ անցնելը ժամանակավոր բնույթ է ունեցել. ուսման առաջին տարիներին եղել է աստղ, իսկ որոշ ժամանակ անց հասակակիցները սկսել են առաջ անցնել: Եվ վերջ, երեխան դա ընդունում է այդ որպես իր ճակատագրի ձախողում:

Ի դեպ, ծնողների չափազանցված ակնկալիքները ստեղծագործական զարգացման համար լուրջ արգելք կարող են դառնալ: Նրանք իրենց սեփական չիրականացած հավակնություններն ու գերազանցված սպասելիքները բարձում են երեխաներին, նրանց չեն սովորեցնում պարտվել: Այդ պատճառով ամեն մի վրիպում թվում է անուղղելի, իսկ հնարավոր անհաջողության սարսափը կաթվածահար է անում իրադարձությունների զարգացումը: Լավ կլինի, որ ուսուցիչը հաճախակի և հետևողականորեն հիշեցնի ծնողներին այդ մասին:

Եվ ընդհանրապես օժտված երեխային շրջապատող բոլոր մեծահասակներին էլ չէր խանգարի հիշել, որ իրենց առջև նախ և առաջ երեխա է, որին անհրաժեշտ է խաղալ, նկարել, պարել, վազվզել: Իսկ եթե հանուն սեփական հեղինակության միայն շահագործենք նրա ընդունակությունները, չապրած մանկությունը հետագայում շատ հիվանդագին կարող է անդրադառնալ նրա կյանքին, ով ինչ-որ ժամանակ եղել է օժտված երեխա:

Ըստ դպրոցականի ուսումնառության չափորոշիչների՝

**3-րդ մակարդակում** այն երեխաներն են, ովքեր առանց դժվարության ընկալում են ուսումնասիրվող նյութը, առանձնացնում են գլխավորը, էականը, օրինաչափը, մասնավորում տեսնում են ընդհանուրը, ինքնուրույնաբար կարողանում են բացահայտումներ կատարել, ստացած գիտելիքները գործադրել նոր իրավիճակներում, կարճ ժամանակում հասնել գիտելիքների բարձր մակարդակի:

**2-րդ մակարդակում** նյութը յուրացնում են մարզողական աշխատանքներից հետո, էականը, օրինաչափը անմիջապես չեն կարող առանձնացնել, որոշակի վարժողական աշխատանքից հետո նոր տեսնում են մասնավորի մեջ ընդհանուրը: Գիտելիքների յուրացման համար ավելի շատ ժամանակ է պահանջվում:

**1-ին մակարդակում** նյութը յուրացնում են բազմակի վարժություններ կատարելուց հետո, դժվարանում են էականի առանձնացման մեջ, անգամ ամբողջ դասարանի հետ ընդհանուր վարժողական աշխատանք կատարելուց հետո, հիմնականում կատարում են վերարտադրողական առաջադրանքներ, գիտելիքները յուրացնում են շատ երկար ժամանակահատվածի մեջ:

Խմբերի բաժանելը պայմանական պետք է լինի, քանի որ պետք է հաշվի առնել նաև կարողությունների դինամիկան (փոփոխել անդամներին ըստ զարգացման): Մասնակիցները ենթակա են մշտական փոփոխման: Նպատակահարմար է խմբին տալ անուններ, որոնք ուղղակիորեն չեն կապվում շերտավորման հետ: Օրինակ՝ <<Ձնծաղիկ>>, <<Մանուշակ>>, <<Կաղնիներ>>, <<Սոսիներ>>, <<Բարդիներ>>:

Շերտավորված աշխատանքի 1-ին տարբերակը հետևյալն է:

Դիտարկենք Հ. Շիրազի <<Հայոց հրաշք՝ Մեսրոպ Մաշտոց>> բանաստեղծությունը:

**1-ին մակարդակ** Ինչու՞ Մաշտոցը ստեղծեց հայոց գրերը: Պատասխանը հիմնավորելիս օգտվի՛ր բնագրից:

**2-րդ մակարդակ** Ի՞նչ ես կարծում, ինչու՞ է հեղինակը այբուբենը Հայկյան բանակ անվանում:

**3-րդ մակարդակ** Հորինի՛ր երկխոսություն Հայկ Նահապետի և Մեսրոպ Մաշտոցի միջև:

Կամ Ս. Մուրադյանի <<Քաջ արտուտիկը>>

1-ին մակարդակ Ինչպե՞ս էր<<Քաջ արտուտիկը>> արևածագը ողջունում: Ի՞նչ պատահեց նրան մի առավոտ:

2-րդ մակարդակ Ի՞նչ ես կարծում, ինչու՞ էր արտուտիկը շարունակում ճախրել:

3-րդ մակարդակ Գտնել ենթատեքստը:

Այնուհետև յուրաքանչյուր առաջադրանքի կոնկրետացում տարբեր մակարդակի աշակերտների համար:

3-րդ մակարդակ Նկարել երկինքն ըստ բանաստեղծության

2-րդ մակարդակ Նկարել երկտողը.

<<<Ամպրոպն է գոռում, շողում կայծակը,

Սակայն ճախրում է անվախ թռչնակը:>>

1-ին մակարդակ Նկարել արտուտիկին՝ բանավոր ընթերցանությունից ստացած տպավորության հիման վրա:

Շերտավորումը կարող է իրականացվել կարդալու տեխնիկա զարգացնելու նպատակով, օրինակ՝

1-ին մակարդակ Կարդալ 1-ին պարբերությունը՝ ուշադրություն դարձնելով ուղղագրությանը և արտահայտիչ ընթերցանությանը:

2-րդ մակարդակ Արտահայտիչ ընթերցել իրեն դուր եկած հատվածը:

3-րդ մակարդակ Արտահայտիչ ընթերցել ամբողջ տեքստը:

Կամ՝

1-ին մակարդակ Կարդալ 1-ին հատվածը և պատմել մոտ բառերով:

2-րդ մակարդակ Կարդալ և մանրամասն պատմել ամբողջ տեքստը:

3-րդ մակարդակ Կարդալ ամբողջ տեքստը և համառոտ պատմել:

Ստեղծագործական բնույթի շերտավորված առաջադրանքներ:

1-ին մակարդակ Որոշել տառերի ճիշտ հերթականությունը բառում: Վերականգնել բառը:

2-րդ մակարդակ Հորինել պատմություն <<Աշուն>> թեմայով՝ տրված հենակետային բառերի օգտագործմամբ:

3-րդ մակարդակ Հորինել մի քառատող աշնան մասին:

Աշխատանք տեքստի շուրջ ընթերցումից հետո:

Այս փուլի նպատակն է զարգացնել տեքստի բովանդակության ընկալումը վերլուծական մակարդակով (գլխավոր գաղափարի, իմաստի ընկալումը): Առաջադրել խնդրահարույց հարց, որի միջոցով վեր են հանվում հեղինակի մտադրությունները, ենթատեքստում թաքնված մտքերը, օրինակ՝ Մայրենի 3 (Մխիթար Հերացին և տակառագործը)

Հարց- Օտարականը ինչու՞ ներողություն խնդրեց և հեռացավ:

Այս բոլոր աշխատանքները հանգեցնում են ուսուցման գործնականացմանը:

Այս տեխնոլոգիան պետք է կիրառել սկսած գրաճանաչության փուլից, երբ սկսվում է տեքստի ընթերցումը:

Ընթերցողական կարողության ձևավորման տեխնոլոգիան

1. Աշխատանք տեքստի շուրջ մինչև ընթերցելը

Այս փուլի նպատակն է վերնագրի, նկարազարդման և հենակետային բառերի միջոցով զարգացնել տեքստի բովանդակությունը կանխագուշակելու կարողությունները:

Երեխաները կարդում են հեղինակի ազգանունը, ստեղծագործության վերնագիրը, դիտում են նկարազարդումը և կատարում են ենթադրություններ թեմայի, հերոսների և դեպքերի հաջորդականության վերաբերյալ:

Երեխաները լուռ, ապա բարձրաձայն կարդում են տեքստի հենակետային բառերը, որոնք ուսուցիչն ընտրել և նախապես գրել է գրատախտակին և ճշգրտում են իրենց ենթադրությունները ստեղծագործական թեմայի, հերոսների և դեպքերի զարգացման շուրջ:

Օրինակ՝ <<Գորգի տակ>> դասանյութն ընթերցելուց առաջ ընթեցում են վերնագիրը, հեղինակի ազգանունը և պատասխանում հետևյալ հարցերին՝

●Դու հանդիպեցիր Կառլսոնին, որն ապրում էր տանիքում, իսկ երբևէ մտածե՞լ ես, թե ովքեր կարող են ապրել գորգի տակ:

●Ուշադիր դիտիր նկարազարդումներին և որոշիր՝ ովքեր են հերոսները, ինչ գործողություններ են կատարում տեքստում:

Աշակերտներն իրենց երևակայության սահմաններում փորձում են կանխագուշակել տեքստի բովանդակությունը:

2. Աշխատանք տեքստի շուրջ տեքստի ընթերցման ժամանակ

Այս աշխատանքի նպատակն է տեքստի բովանդակության նախնական ընկալումը:

Լուռ ընթերցել տեքստը՝ ստուգելով իրենց ենթադրությունները տեքստի բովանդակության վերաբերյալ:

Երեխաները բարձրաձայն ընթերցում են տեքստը՝ ոչ մեծ պարբերություններով, որն էլ ուղեկցվում է համապատասխան մեկնաբանություններով: Ընթերցանության ընթացքում (ոչ թե ընթերցելուց հետո) ուսուցիչն առաջադրում է հարցը տեքստի տվյալ պարբերության շուրջ, որոնց միջոցով ստուգվում է ընկալման աստիճանը:

Եթե տեքստը ծավալուն է և 1 դասաժամի ընթացքում հնարավոր չէ ընթերցել, ապա կարելի է հաջորդ դասաժամին շարունակել:

Այնուհետև հարց է տրվում, արդյոք թեմայի, բովանդակություն, դեպքերի զարգացման մասին ենթադրությունները համընկնում են, թե՝ ոչ:

Այսպիսով երեխաներն ակտիվորեն մասնակցում են տեքստի ընկալման գործընթացին, ընթերցման ժամանակ խորանում բառերի իմաստների շուրջ, դեպքերի զարգացման շուրջ, հերոսների բնավորության շուրջ, մտովի տեսնում են գեղարվեստական պատկերները, որոնք ստեղծում է հեղինակը:

Այս ամենը ապահովում է կարդալու կարողությունը՝ իր որակական <<հատկանիշներով>>՝ վարժ, սահուն, արտահայտիչ, հասկանալով, տրամաբանական շեշտը արտասանելով և առոգանությամբ: Քանզի չկա ավելի կարևոր կարողություն, քան կարդալու կարողությունն է: Այս բոլոր աշխատանքները հանգեցնում են ուսուցման գործնականացմանը:

<u>3. Աշխատանք տեքստի շուրջ ընթերցումից հետո</u>

Այս փուլի նպատակն է՝

- զարգացնել տեքստի բովանդակության ընկալումը վերլուծական մակարդակով (գլխավոր գաղափարի, խնդրի ընկալում),
- առաջադրել խնդրահարույց հարց, որի միջոցով վերծանվում են հեղինակի մտադրությունները, ենթատեքստում թաքնված մտքերը:

Մայրենի 3

Օրինակ՝ Մխիթար Հերացին և տակառագործը

Ուսուցիչը ներկայացնում է հեղինակին: Երեխաները տեքստի ընթերցումից հետո ստացած տպավորությունները համեմատում են ուսուցչի հաղորդած տեղեկատվության հետ:

Մայրենի 4 – Փոքրիկ իշխանը

Հնարավորության սահմաններում ուսուցիչը պատմում է, թե ինչպիսին է եղել հեղինակն իրենց տարիքում և որն է դառել այդ ստեղծագործության դրդապատճառը:

Անտուան դը Սենտ Էկզյուպերիի մասին -նա երազկոտ երեխա է եղել, գրել է, նկարել, ջութակ նվագել, հրապուրվել զանազան սարքավորումներով, մեքենաներով: Ընկերները նրան աստղագետ են անվանել, որովհետև նրա <<քիթն ուղղված է դեպի երկինք>>: Այնուհետև զրույց է տարվում վերնագրի շուրջ, ինչ կապ ունի վերնագիրը թեմայի հետ:

Այսպիսով, ստեղծագործական բնույթի աշխատանքներ պետք է տանել ուսուցման բոլոր փուլերում:

## Եզրակացություն

Այսպիսով, մայրենիի ուսուցումը նպատակաուղղված է երեխայի ստեղծագործական երևակայության, մտածողության, կարդալու կարողությունների, խոսքի զարգացման, ինքնուրույն,ինքնավստահ, հոգեպես և մարմնապես առողջ մարդու ձևավորմանը:

Գրականագիտական գիտելիքների ուսուցումն իրականացվում է գործնական եղանակով: Տեսնել գեղարվեստական ստեղծագործությունում բառի պատկերավորությունը, տեսնել բանաստեղծական խոսքի երաժշտականությունը, մտորումներ տեքստի վերնագրի շուրջ:

Ժամանակակից մեթոդներով դաս վարելու հնարավորությունները զարգացնում են երեխաների մտավոր, կամային, հուզական, գեղագիտական գործունեությունը, բովանդակության նկատմամբ հետաքրքրությունը և քննադատական մոտեցումը:

Երեխաների հոգեֆիզիոլոգիական զարգացման տարբերությունը ենթադրում է շերտավորված աշխատանք: Սա կարող է նպաստել երեխայի անձի կայացմանը, բացահայտել անհատական առանձնահատկությունները: Խմբերի բաժանելը պայմանական պետք է լինի: Հաշվի առնելով զարգացման դինամիկան՝ փոփոխել անդամների ըստ զարգացման: Այսպիսով, մասնակիցները ենթակա են մշտական փոփոխման: Այս աշխատանքը հնարավորություն է տալիս ապահովել երեխայի զարգացման դինամիկան և աստիճանաբար փոփոխել խմբի անդամներին ըստ զարգացման:

Մայրենիի ուսուցման բոլոր փուլերում պետք է կարևորել ստեղծագործական բնույթի աշխատանքները, որոնք առավել բնորոշ են օժտված երեխաներին:

Օժտված երեխայի հայտնվելը դասարանում ուսուցչից հատուկ մոտեցում է պահանջում, այն է պահպանել, զարգացնել երեխայի հատուկ ընդունակությունները՝ չվնասելով հուզական ոլորտի զարգացմանը:

Նախ պետք է տեսնել երեխայի օժտվածությունը, ապա անհրաժեշտ է հատուկ պայմաններ ստեղծել զարգացման համար,քանզի օժտվածությունը նեղ սահմաններում չի զարգանում:

Երեխան պետք է սովորի դժվարությունները հաղթահարել, խիզախել, նպատակին հասնելու համար համառուն ցուցաբերել:

Տվյալ երեխաները ցուցաբերում են ոչ ստանդարտ մոտեցումներ, գտնում են ինքնատիպ լուծումներ, ուստի դասերի ժամանակ պետք է ապահովել շփման բարձր մակարդակ:

# Օգտագործված գրականություն

1. Կարինե Թորոսյան, «Բաշխիչ նյութեր»

2. «Դպիր» ամսագիր

3. Մայրենիի դասագրքեր / 2, 3, 4 դասարաններ/